

բազայիւ՝ դարձեալ բերիցեն ի յաճումն ընթերացն ուրախութեան¹. Եւ այսպէս առլցեալք իւրաքանչիւր որսով՝ գնան ուրախացեալք:

14 Որոց դէտ ակն կալեալ ըստ հանապազարեայ սովորութեան՝ ջրայոյ՝ ջրածուի ձկնորսացն մանկունք³, ընթացեալք ի յառաջս⁴ նախարարագունդ որերոյն՝ ձկունս ի յորսոյ⁵ եւ բազմազան վայրենի հաւուց ծագս եւ կամ⁶ ձուս ի կղզեաց գետոյն բերեալ մատուցանեն ընծայս իշխանացն: 15 Յորոց ընկալեալ մասն ինչ նախարարացն ըստ կամի՝ պարգեւեն եւ նոքա⁷ ի յիւրեանց բերոցն ըստ առաւելապէս բաւականի ընծայաւորացն. եւ հասեալք լի ամենայն բարութեամբ իւրաքանչիւր յապարանս՝ շնորհեն եւ անպարապիցն մնացելոցն ի տան՝ զամբիծսն, առաւելապէս եւ առ աւտարսն: 16 Եւ տեսանել է⁸ յամենեցուն ընթրիս, որպէս եւ շեղջակոյտս ինչ ի վերայ միմեանց, գերեցն բազմութիւն եւ զնոցուն գլխոց կարգմանց զառաջադրութիւն. յորոց⁹ ուրախացեալ բերկրին ձկնակերացն եւ մսակերացն անծինք. առաւել քան զխորտկաց անուշութեամբ՝ հոգեւոր ճաշակաւք, սաղմոսիւք եւ մարգարեական երգաւք արինելով զպարգեւատուն Քրիստոս եւ զտուիչ եւ զլցուցիչ ամենայն բարութեանց:¹⁰

Ը. Եւ արդ՝ զայսպիսի զըղձակերտ գաւառ, զչնաշխարհիկ¹¹ եւ զամենալի ըստ տուչութեան ամենախնամ արարչին Աստուծոյ, զԱյրարատեան գաւառ, որ է զլուսի աշխարհիս Յայոց, զգաւառն համբաւատենչ, զգաւառն ամենալի, որ բերէ յինքեան¹² զաւրինակ լիութեան, ըստ բանի¹³ Գրոյն, զերկրին Եգիպտացոց եւ զդրախտին Աստուծոյ, եւ զբնիկ սեպհական¹⁴ կալուածի ազգին Արշակունեաց զբաղաքն Վաղարշապատ, զբնակութիւն ոստանի Արշակունի թագաւորացն, զբարձրաբերձ¹⁵ շինուածս անթիւ ապարանացն, զանյագ զամենալի դաշտացն զբերկրումն¹⁶, զիրեշտակացոյց հիմնարկու-

1 Ձ. ուրախութեամբ

2 Ձ. ջրայոյլ

3 Ձ. մանգունք

4 ՏՏ. ի յառաջ

5 Ձ. ի յորս

6 ՏՏ. չիք կամ

7 Ատ. եւ նոցա

8 Ձ. չիք է

9 Ձ. որոց

10 Ձ. աւելցնում է մեղայ ռ. բերան

11 Ձ. չնաշխարհիկ

12 Գտ. բերէ յինքեան

13 Ձ. զըստ բանի

14 ՁՏՏ. սեփական

15 Ձ. զբարձրաբերձ

16 Ձ. զդաշտացն բերկրումն